ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
23	Ապրանքը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Տարազաբաճկոն՝ ուսադիրներով (տղամարդու), արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար (Ձև 8): Կարվող ուսադիրներով, որը պատրաստվում է մուգ կապույտ գույնի գաբարդինից: Տարազաբաճկոնը երկփեղկանի և երեք կոճականի է, թիկնամասի ներքևում առանց կտրվածքի, իսկ օձիքի վրա ամրացվում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը: Տարազաբաճկոնը կոճկվում է աջ կողմից: Օձիքը և թևածալքերն ունեն մուգ կարմիր եզրաշերտ՝ 2,5 մմ լայնությամբ: Օձիքի և թևածալքերի վրա ոսկեգույն թելով ասեղնագործված են կաղնու ճյուղեր: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Նախքան տարազաբաճկոնի պատրաստումը տարազաբաճկոնի գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Ապրանքի փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկով, պարկի վրա պետք է նշված լինի անվանումը ըստ վերցված անհատական չափսի, պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսը: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
23	